Հայտերի ներկայացման հրավեր

Հայաստանի Հանրապետություն

24 նոյեմբերի 2016 թ.

Սոցիալական Ներդրումների և Տեղական Զարգացման Ծրագիր

Վարկ No P148836

Պայմանագիր # TAR-05

Այգեշատի դպրոցի վերակառուցում

1. Հայաստանի Հանրապետությունը Համաշխարհային բանկից ստացել է ֆինանսավորում Սոցիալական Ներդրումների և Տեղական Զարգացման Ծրագրի համար և մտադիր է միջոցների մի մասն օգտագործել **"Այգեշատի դպրոցի վերակառուցման"** պայմանագրի շրջանակներում վճարումներ իրականացնելու համար:

2. Սույնով **Արմավիրի մարզի, Այգեշատ համայնքի Ծրագրի Իրականացման Կոմիտեն** հրավիրում է ներկայացնել կնքված փաթեթներ իրավասու մասնակիցներից՝ **Այգեշատի դպրոցի վերակառուցման համար**: Որակավորման պահանջները ներառում են. ա/ վերջին երեք տարիներից որևէ մեկ տարում հաջողությամբ կատարված **247.000.000** դրամի շին. աշխատանքների ծավալ, բ/ վերջին հինգը տարվա ընթացքում որպես գլխավոր կապալառու կատարած առնվազն երկու պայմանագրեր՝քաղաքացիական շենքերի կառուցման և վերակառուցման: Ներկայացվող աշխատանքներից յուրաքանչյուրի արժեքը չպետք է պակաս լինի **155.000.000** ՀՀ դրամից, կամ մեկ պայմանագիր առնվազն **310.000.000** ՀՀ դրամ, գ/ նվազագույնը **27.000.000 ՀՀ** դրամի իրացվելի միջոցներ և/կամ վարկային գիծ, դ/ որպես պայմանագրի շնորհման նախապայման, հայտատուն պետք է ներկայացնի ՀՀ Քաղաքաշինության նախարարության կողմից հաստատված "**Քաղաքացիական**" և "**Էներգետիկական**" լիցենզիաներ:

3. Մրցույթն իրականացվելու է Ազգային մրցակցային մրցույթի միջոցով, համաձայն Համաշխարհային բանկի ուղեցույցների՝ «*Ապրանքների, աշխատանքների և ոչ-խորհրդատվական ծառայությունների գնում ՄԶՎԲ փոխառությունների և Համաշխարհային բանկի վարկերի ու դրամաշնորհների փոխառուների կողմից*» Հունվար 2011 թ. վերանայված Հուլիս 2014 թ. «Գնումների ուղեցույցներ»: Բացի այդ, խնդրում ենք ծանոթանալ նաև 1.6 և 1.7 ենթակետերի հետ, որոնք սահմանում են Համաշխարհային բանկի քաղաքականությունը շահերի բախման մասով:

4. Շահագարգռված իրավասու մասնակիցները կարող են լրացուցիչ տեղեկություններ ստանալ Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամից և ուսումնասիրել Մրցութային փաստաթղթերը աշխատանքային ժամերին 10.00 – 17.00 հետևյալ հասցեով ք. Երևան, Կ.Ուլնեցու 31, 406 սենյակ, 4-րդ հարկ:

5. Շահագրգիռ իրավասու մասնակիցները Մրցութային փաստաթղթերն ամբողջությամբ Հայերեն լեզվով կարող են ստանալ վերոնշյալ հասցեով՝ վճարելով 3000 ՀՀ դրամ չվերադարձվող

գումար: Վճարումն իրականացվում է բանկային փոխանցումով: Փաստաթղթերը տեղադրված են նաև www.gnumner.am և www.atdf.am կայքէջերում:

6. Հայտերը պետք է ներկայացվեն ստորև նշված հասցեով ամենաուշը **2016թ-ի դեկտեմբերի 22-ին, ժամը 12:00-ին**: Առաջարկները ***չեն կարող*** ներկայացվել էլեկտրոնային եղանակով: Ուշացված առաջարկները կմերժվեն: Մրցութային առաջարկները հրապարակայնորեն կբացվեն մրցույթի մասնակիցների նշանակված ներկայացուցիչների, ինչպես նաև բացմանը ներկա գտնվելու բոլոր ցանկացողների ներկայությամբ ստորև նշված հասցեով:

7. Բոլոր առաջարկները պետք է ուղեկցվեն մրցույթի ապահովման հայտարարագրով:

8. Վերոնշյալ հասցեն է՝

Ում. Հովսեփյան Ռոբերտ

Արմավիրի մարզ, Այգեշատի Ծրագրի Իրականացման Կոմիտե

ՀՀ, Արմավիրի մարզ, Էջմիածնի շրջան, Այգեշատ համայնք, փող.Մայիսյան 12, /համայնքապետարան/

Հեռ: +37493 418 800